

ՊԻԵՍՆԵՐ ՏԻԿԼԻԿԱՅԻՆ
ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանեց
Յուրի Սահակյանը

ՊԻԵՍՆԵՐ





Թարգմանչի առաջաբանը

Սիրելի՛ ընթերցող,

Թատրոնի դասիժնում արդեն մութ է, իսկ վարագույրը դեռ չի շտապում բացվել: Ջգուշորեն ու անշշուկ անցի՛ր շարքերի միջով ու նստի՛ր: Քանի՛ զարմացած ու պայծառ աչքեր ես սրտի բրբիռով նայում վարագույրին՝ նրա մյուս կողմի հրաշալի աշխարհի սպասումով: Ուր էլ ուղղորդի քեզ ներկայացումը՝ հեքիաթային անտառ կամ Մայրատան կոչվող անձանոթ երկիրը, գոտական բակ կամ կենդանիների դպրոց, որտեղ էլ հայտնվես ներկայացման հերոսների հետ, վստահաբար հաճույքով կմասնակցես նրանց կյանքի փոքրիկ իրադարձություններին, կձանոթանաս քարի, ընկերասեր, ագահ, վախկոտ կամ ծույլ հերոսներին ու կընտրես նրանց, ում հետ կուզենաս մտերմանալ և ընկերություն անել ամբողջ կյանքում:

Այս գրքում վեց մանկական հեքիաթ-պիեսների բնական վարագույրը հերթով կբացվի քո առջև՝ բերելով իր աշխարհը, բույլ կտա մասնակցել բոլոր զվարճալի արկածներին, բարու ու չարի անվերջանալի հակամարտությանը, սակայն քո անմիջական օգնության շնորհիվ վերջում, անշուշտ, կհաղթանակի քարին:

Մանկական պիեսների հեղինակները, հանրաձանաչ եև ու սիրված թե՛ երեխաների, թե՛ մեծերի միջավայրում, գուցե այլ ստեղծագործություններից որոշ չափով արդեն ծանոթ եև քեզ: Այս նոր հանդիպումը թող կրկին ամրապնդի ձեր ընկերությունը և քո պատրաստակամությունն ու համառությունը՝ նպաստելու քարու հաղթանակին՝ այստեղ և ամենուր:

*Բարի օր՝ այսօր և ամեն օր
Յուրի Սահակյան*

ԻՐԻՆԱ ՏՈՎՄԱԿՈՒԼԱ



ԾՈՒՂՐՈՒՂՈՒՆ

Հեղաթուրակներ
երկու գործողությամբ,
հինգ արարով

ԱՌՆՁԻՆ ԿՈՐՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին արար

Բակ: Յանկապատ: Ծղոտն տանիքով տնակ: Տնակի ձայն կողմում երկու մատղաշ կեչի: Նրանց միջև՝ լվացքի պարան: Պարանին, սպիտակեղենից բացի, փոխած են երեք թաշկինակներ՝ «Մուղ», «Երու», «Դու» մակագրություններով: Լուսանում է: Դանդաղ բարձրանում է արևը: Ճածալով բացվում է տնակի դուռը: Բակ է դուրս գալիս Աքաղաղը:

Աքաղաղ (*Քաղում է թեթևակի հարդարելով իրեն:*) – Բարի լույս: Լավ ցնեցի: Վա՛յ, կներեք: Մոռացա ներկայանալ: Իմ անունը Աքաղաղ է: Ես թափառեղծ եմ, բանաստեղծություններ եմ գրում:

*Ովքեր դպրոցը մոռանան,
Ջնած մնան մեր գյուղում,
Նրանց սիրով կարթնացնի
Իմ գրնգուն ծուղ-րու-ղղը...*

(Նրա ձայնը վերջին փանկում կտրվում է): Վա՛յ, վա՛յ, ի՛նչ պատահեց: *(Աքաղաղը նորից է արտասանում «ծուղ-րու-ղում»՝ փանկարկելով հերթով թաթիլը դնելով լվացքի պարանին չորացող թաշկինակներին):* Վերջին «դու»-ն լավ չի չորացել: Կիևս երեկոյան լվացել է իմ «Մուղը»-ն, ես էի խնդրել: Մի թեթև փոշուովի էր: Իսկ բանաստեղծն իր «Մուղը»-ն սփռի մաքուր պանի՝ աներաժեշտ պահին անմիջապես կանչելու համար:

Տնակի դռնակը ճածոում է, և շեմին երևում է Թիսկանը:

Թխական – Ամուսնյակ ջան, նախածաշր պատրաստ է: Մի՛ ուշանա, աղափնյա՛կա:

Աքաղաղ – Ես աքլոր եմ Աքաղա՞ղ, գոմարած՝ նաև բանաստեղծ, իսկ ես՝ «աղափնյա՛կա...»: Դե լա՛վ, ոչի՛նչ: Հո չե՛մ վիճելու հետը... Եկա՛, եկա՛:

Աքաղաղը մտնում է տուն: Դանդաղ բացվում է պատուհանը, և հայտնվում է Պիպի գլոխը:

Պիպ (*Նայում է աչ ու ձախ*) – Եղբայրեն՛ր, իմ հետևի՛ց:

Ճուտիկներն իրար հետևից դուրս են ցատկում պատուհանից:

Հասկացա՛ք:

Պիկ – Համա բե խելոքն ես, հա՛, Պի՛պ:

Պիպ – Ճիշտ է, Պի՛կ: Ես շատ խելոք եմ:

Ֆիլիպ – Բացատրի՛ր ինձ, Պի՛պ, ես չհասկացա:

Պիպ – Դու միշտ էլ...

Պիկ – Ի՛նչ դմբո ես, Ֆիլի՛պ:

Ֆիլիպ – Ես դմբո չեմ: Ես փոքրիկ եմ:

Պիպ – Դե լա՛վ, լաի՛ր: Տեսնո՞ւմ ես հայրիկի «ծուղրուղու»-ն, որ չորանում է: Հիմա մենք կվերցնենք այն, կտանենք բաքոն մի տեղ և ինքներս էլ կսովորենք «ծուղրուղու» կանչել:

Պիկ – Եստ լավ ես մտածել, Պի՛պ: Մենք արդեն այլքան ենք մեծ, որ ինքներս էլ կարող ենք «ծուղրուղու» կանչել:

Պիպ – Ոչ բե «ծուղրուղու», այլ՝ «ծուղրուղու»:

Պիկ – Ճիշտ է՝ «ծուղրուղու»:

Ֆիլիպ – Իսկ ի՛նչ է, կարելի՛ է:

Պիպ – Իսկ մենք չենք հարցնի, հասկացա՞ր:

Ֆիլիպ – Ես գիտեմ, որ չի կարելի առանց հարցնելու:

Պիպ – Այդ դեպքում դու տանը մնա, փոքրի՛կա:

Պիկ – Դե լավ, սկսեցի՛նք:

ԲՈՎԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԾՈՒՂՐՈՒՂՈՒՆ	
<i>Իրինա Տոկմակովա</i>	5
ՓՂԻԿԸ ԳՆԱՑ ՍՈՎՈՐԵԼՈՒ	
<i>Նալինդա Մամոյլով</i>	35
ՈՍԻՆ ԱՔՋՈՐԻԿԸ	
<i>Վադիմիր Օպոլ</i>	47
ԵՐԲ ԾԱՂԿՈՒՄ Է՝ ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԻԿԸ	
<i>Ռաբա Մոսկովա</i>	81
ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՀԻՊՊՈՊՈՏԱՄԸ	
<i>Վադիմիր Լիֆշից, Իրինա Կիչանովա</i>	115
ՎԵՐԱՆ ՈՒ ԱՆՖԻՍԱՆ	
<i>Էդուարդ Ոսպենսկի</i>	161